ՌՈՒԲԵՆ ՕՆԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 02.01.1958

Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Երևան

Պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Օնիկի Սահակյանը Երևանում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1975 թ. ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-աշխարհագրական ֆակուլտետը, որն ավարտել է 1980 թ.:

1980-1982 թթ. ծառայել է Խորհրային բանակում:

1982-1989 թթ. աշխատել է որպես պատմության ուսուցիչ Երևանի № 114 միջնակարգ դրոցում:

1983 թ. ընդունվել ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հեռակա ասպիրանտուրան:

1989-1994 թթ. աշխատել է որպես ավագ լաբորանտ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնում:

1991 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Արևմտահայ ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին»:

1994-1997 թթ. ծառայել է ՀՀ ազգային բանակում:

2013 թ. պաշտպանել է «Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս – 1917 թ. փետրվար) թեմայով դոկտորական ատենախոսությունը:

Ռ. Սահակյանը 1997 թ. աշխատանք ի է ընդունվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, այնուհետև նշանակվել է ավագ և առաջատար գիտաշխատողի պաշտոններում:

Ռ. Սահակյանը դասավանդել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում, Հալեպի Հայագիտական դասընթացներում, Երևանի կինոյի և թատրոնի ինստիտուտում:

Ռ. Սահակյանի գիտական հետաքրքրությունների շրջանակներում են Հայոց նոր և նորագույն ժամանակաշրջանի տարաբնույթ հիմանխնդիրները՝ Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ կամավորական շարժում, հայկական ոստիկանություն, հատուկ ծառայություններ, Հայաստանի առաջին և երկրորդ (խորհրդային) հանրապետությունների պատմություն և այլն:

Ռ. Սահակյանը հեղինակել է 10 մենագրություններ և փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ:

Համահեղինակել է «Հայոց պատմություն» ակադեմիական քառահատորյակի երրորդ հատորի մեկ գրքի, «Հայոց պատմություն» դպրոցական դասագրքի (1993-2018):

Ռ. Սահակյանի գիտական ղեկավարությամբ ինստիտուտի 2 ասպիրանտ (Ս. Փայասլյան (2006), Լ.Քոսյան (2026) հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Ռ. Սահակյանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով ու ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ԼՂՀ պաշտպանության բանակի զորամասերում:

Ռ. Սահակյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի վաստակագրով, ՀՀ ՊՆ «ՀՀ Զինված ուժեր 20 տարի», «Գարեգին Նժդեհ», Արցախի Հանրապետության «Վաչագան Բարեպաշտ» մեդալներով:

Ռ. Սահակյանը կուսակցական չէ, ամուսնացած է, ունի որդի: